

## ՔՆՆԱԳՈՏՈՒԹԻՒՆ ԵՒ ՄԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ

Աւետի Իսահակեանի «Քաճառտեղծութիւններ». 1903 թ., Բագու.

Ա. Իսահակեանը, վերջին տարիների այդ երգիչը, սիրահարների խօսնակը, արդէն բաւական ժողովրդական մի բանաստեղծ է, որի ոտանաւորները երգոււմ են շատ տեղերում. այսօր, երբ նրա ընդարձակ ժողովածուն լոյս տեսաւ Բագու, Արօրի խայտաբղէտ տպագրութեամբ, հարկադրոււմ է անաչառ քննադատական հայեացքով քնահատութեան խօսք ասել նրա մասին \*):

Կան մարդիկ, որոնց կարելի է անկեղծ սիրել և միաժամանակ խոստովանել, որ նրանք ուժ չեն, կարևոր ու ներգործող անհատներ չեն:

Ա. Իսահակեան բանաստեղծն այդ դուրեկան, բայց ոչ հարակալկան ուժեղ անհատներից է:

Ա. Իսահակեանը սուբյեկտիւ տեմպերամենտներից է, զուտ լիրիկ, լոկ անհատական վշտերի ու ցաւերի երգիչ. հասարակական կեանքի զանազան հոգսեր այնքան էլ չեն կարող հետաքրքրել նրան, որքան անհատական յոյզերը, տենչերը, ցանկութիւնները:

Ձգայուն, անկեղծ յոյզերի, քնքոյշ ելևէջների մի ժողովածու է բանաստեղծութիւնների այն շարքը, որ մեր երիտասարդ երգչի քնաւն է հնչեցրել, որոնց ցնորուն ընոյթը՝ միացած արտաքին գրաւչութիւնների հետ՝ նրա արժէքն է կազմոււմ, յոյզեր մի երիտասարդ մարդու մտորման, վշտոտ սիրոյ, երազների, երբեմն բուռն, բայց յաճախ աննպատակ տենչանքների, որոնք պարզոււմ, որոշոււմ են կոլորիտը՝ սոցիալական տեսակէտից համարեա անարժէք ստեղծագործութեան. այդտեղ դառնոււմ ենք միայն մի մարդու անձնական, անորոշ, «ան-

\*) Տպագրելով այս քննադատութիւնը՝ խմբագրութիւնս համաձայն է սչ բոլոր կէտերում հեղինակի հետ:

ձեռն տենչանքներն ու ցանկութիւնները, որոք չէ՛ կան, և՛ չկան: Աչքի ընկնող արժանիքը, որ նրա ամբողջ պոէզիայում նկատելի է, այդ այն ձևը, արտաքին գրացիան է, որով արտայայտում է նա ներքինը. օրիգինալ երգելու եղանակ, հարուստ լեզու, քնքոյշ ու ճկուն ոճ դուրեկան երաժշտութեամբ, յաճախ տպաւորիչ, երբեմն նորաստեղծ պատկերներ, ահա գեղեցկութիւններ, որոնք նրա անկապտելի սեփականութիւնն են կազմում. գրական ու ժողովրդական բառերի և ոճերի հմուտ վարպետութեամբ հեղինակը հիւսել, ստեղծագործել է ինքնուրոյն սո՛ւ, որ օրինակելի է մեզնում և որով նա ազդել է շատ երիտասարդ բանաստեղծների վրայ. միացրէ՛ք նաև վառ ու քնքոյշ երևակայութիւնը, տպաւորութեան բնական, անարուեստ արտայայտութիւնը, զգայուն և ցնորուն այն խառնուածքը, որ գրաւչութիւն է տալիս նրա գործերին, մեր քնարերգութեան ողորմելի դրութիւնը, երբ ասպարէզ իջաւ նա, և այն ժամանակ պարզ կը լինի այն ժողովրդականութեան պատճառը, որ երիտասարդ բանաստեղծը վայելեց արագութեամբ, մանաւանդ երիտասարդ պատանիների և օրիորդների շրջանում, որոնց հոգեկանին շատ ազդակից են նրա ոտանաւորների սիրավառ շեշտերը:

Միանման բանաստեղծութիւնների մէջ, որոնք իրանց ընդհանուր կոլորիտով, երբեմն ըմբանտիզմի, երբեմն էլ դեկադանսի ու սիմվոլիզմի դրոշմ են կրում, գլխաւորապէս աչքի են ընկնում մի քանի մտտիւններ, մտորման, վշտի, սիրոյ. վերջինիս մէջ են մտնում և ժողովրդական այն մտտիւնները, որոնց մէջ պատահած գեղեցկութիւնները ընտիր են իրանց տեսակում մեր ամբողջ քնարերգութեան մէջ: Բոլորի մէջ էլ նկատելի է մի ընդհանուր յատկանիշ, որ հեղինակը զուրկ է առաջնորդող իդէայից, նա դարձացած, կազմակերպուած, ուժեղ միտք չէ, այլ քնարերգակի ձիրքով օժտուած մի երգիչ, որ միայն արագ արտայայտում է պատահած դուրեկան տպաւորութիւնը՝ միանգամայն ազատ պահելով իրան տրամաբանական հետևողականութիւնից:

Սա երգիչ եմ, երկնի թիթեռ.

Սա դանձ չունիմ—ի՛ն ու թե՛ն.

Սա սիրում եմ ծաղի՛կ, աղջի՛կ—

Ծաղկի բուրմունք, կոյսի սէր.

Սա սիրում եմ մրմունջ-տրտունջ,

Տանջւած սրտի ե՛րգ ու վե՛րք...

Թէև ընդհանուր և շարուն խօսքեր, բայց որոշակի պարզում են հեղինակի բարոյական դէմքը. նա թիթեռ է անհոգ,

աննպատակ, միայն ծաղկի բուրմունքի և կոյսի սիրոյ սիրահար:

Գիշերն եկաւ, զով-հովն ընկաւ,  
Աստղունք լուսնին ձէն տւին.  
Լուսնեակն ելաւ, մով-ծովն ընկաւ,  
Հաւքերն ինծի ձէն տւին:  
Ես վեր ելայ ոգի առած—  
Ջարկի սրտիս լարերին.  
Սիրտս խնդաց, կուրծքս թնդաց.—  
Ու լարերը կտրեցին...  
—Մենակ սիրոյ լարը մնաց  
Սրտիս անհուն խորքերում,  
Ու սուրբ սիրոյ երգը շողաց  
Կեանքիս ամեն ծալքերում...

Սոյն ոտանաւորը կարծէք աւելի է պարզում բանաստեղծի գոյութեան իմաստը, նրա ոգևորութեան աղբիւրը, հոգու բովանդակութիւնը. բայց ժողովածուի սկզբի ոտանաւորը, որով դիմում է հեղինակը մօրը, թւում է թէ իր profession de foi-ն է կամենում պարզել, որը միանգամայն այլ բարբառ է նախորդներից.

Գուցէ իմ հեծծանք, հառաչք եւ մրմունջ  
Շատերի համար հնչւին ունայն,  
Տգեղ դաշնակներ եւ կամ սառն, անշունչ  
Սրտի խուլ թօթւանք, կեղծ հնչիւն միայն.  
Ա՛խ, անգին մայր իմ, մայրիկ նազելի,  
Խոցած, վիրաւոր, յօշոտւած հոգիս  
Քեզ համար, մայր իմ, վաղուց է յայտնի—  
Անյոյս, տառապած, մենաւոր հոգիս:  
Ու քեզ են յայտնի տանջանքը որդուդ,  
Արիւն-արցունքս ծածուկ ու զաղտնի:

Նուէրելով երգերը մօրը, որին հարազատ են Թու ծանօթ հոգեկցի ցաւերն ու մրմունջները, միաժամանակ յիշեցնում է նրա արած ներշնչումը, որը որդին երգերի միջոցով ընդառաջ է դնում իբրև իրագործութիւն մայրական աւանդի.

Չէ որ դու դիր իմ մէջ քո հոգին  
Սև բարին սիրել ու ազնիւ լինել.  
Դ՛ու վառիր իմ մէջ հուրը երկնային,—  
Գեղեցկի ծարաւ, անհունի ձգտում,  
Կռիւ չարի դէմ ու ընդդէմ ստին,  
Ապրել ու տանջւել ուրիշի սիրուն:  
Դու լքիր իմ մէջ ծովի չափ մեծ սէր—

Այրել ու լոյս տալ ամբոխի համար,

Ընկնել փոթորկի, հրաբուխի մէջ

Ամբոխի համար, աշխարհի համար...

Ահա իմ սիրտը... նայիր դու մէկ-մէկ.

Ընդունիր, մայր իմ, օրհնիր ինձ, մայր իմ...

Եւ իրաւ, այս ոտանաւորը ամենաբնորոշ արտայայտութիւնն է բանաստեղծի հոգեկան աշխարհի, ամենաճիշտ ընոյթագիրը նրա պոէզիայի. այդ բանաստեղծութեան մէջ արտայայտուել է մի մարդու ներքինը իր տրամագծօրէն բղխած հակասութիւններով. եթէ մօրը նուիրում է իր մտքի արգասիքը, որի մէջ երգել է վեհն ու գեղեցիկը, ձգտում դէպի անհունը, ապրել ու տանջուելը ուրիշի սիրուն, որի մէջ ծովի չափ մեծ սէր է դրել ամբոխի համար այրուող, նրան լոյս տուող, եթէ նրան օգևորել է աշխարհի վիշտը և նոյն աշխարհի համար փոթորիկների մէջ մեռնելու տենչը, ապա էլ ինչո՞ւ այդպիսի գեղեցիկ տողերը պիտի հասկանալի չլինին ուրիշներին, այլ միայն մօրը, ապա էլ ի՞նչպէս կարող են աշխարհն ու մարդիկ չսիրել, չճանաչել իրանց թանկագին երգչին, այլ միայն մայրը, և ոչ էլ յայտնի լինել այդ տանջանքը ամենին, այլ միայն մօրը. պարզ է, որ նմանօրինակ գրողը այլևս չի ասիլ. «գուցէ իմ հեծծանք, հառաչք և մրմունջ շատերի համար հընչին ունայն, տգեղ դաշնակներ և կամ սառն, անդունչ սրտի խուլ թօթևանք, կեղծ հնչիւն միայն». եթէ իրօք հեղինակը կարծում է, որ իր դաշնակները շատերի համար կեղծ հնչիւն պիտի լինին կամ աւելի ճիշտ՝ պիտի թւան այդպէս, այն ժամանակ նա այլևս կորցնում է իր հաւատը դէպի իր երգը, եթէ այդ հոգսերը, «արիւն արցունքը» մօրն են յայտնի միայն, այն ժամանակ այլևս աւելորդ է այդպիսի բանաստեղծը կարծում իրան «ամբոխի համար, աշխարհի համար» աշխարհ իջած:

Հոգեբանօրէն պարզուում են հակասութեան պատճառները. երգիչը զուրկ է որոշ իդէալներից, համոզումներից, նաչգիտէ իր կոչումը, և երկնքի թռչուն է անուանում իրան, որ աննպատակ պտոյտներ է անում և մի արարած է, որի սրտի սիրոյ լարն է մնացել միայն և կարծում է իրան ժողովրդի թշուառութիւն ամբողջ, նրան առաջնորդող հրաշունչ քարոզիչ, նոյնիսկ մարգարէ. թւում է նրան, որ ասպարէզ է իջել վեհ խօսքի, գաղափարի համար, բայց չկայ նրա մէջ գաղափար, հեռանկար, հոգու մէջ ծանրութեան կենտրոն, և երբ ինքնամոռացութեամբ ինչ-որ մտքերի, ամբոխի համար սերմանելու գաղափարների մասին է խօսում, նրա ոտանաւորները դառնում են անորոշ, բառեր, բառեր և բառեր, և շատ ընկան է:

որ՝ կարծելով, թէ ինքը ամբողջի համար է ապրում, միաժամանակ զգայ, որ թերևս իր երգերը կարող են հնչուել իբրև ունայն հառաչներ ու մրմունջներ, և գուցէ մայրը, բայց աւելի ճիշտ՝ միայն ինքը հասկանայ դրանց իմաստը և թերևս ինքն էլ չհասկանայ.

Ո՛ւր կը ծախրէ հոգիս անհուն,

Ի՞նչ կորոնէ, կը տեւչայ.

Միայն ես էի ինձ հասկանում

Սև ես էլ ինձ չհասկացայ...

Միւրոյ, վշտի նոտաների հետ միաժամանակ բաւական ստուար մեծամասնութիւն են կազմում արտաքինով—ըստ երևոյթին սոցիալական-փիլիսոփայական ընաւորութիւն կրող, ընդհանրապէս արուեստական ոտանաւորները, որոնք պարզում են հեղինակի ռանտրոշ ու անձեւ տեխնիկները: Ինքնաճանաչ զգացմունքով վառուած, անսահման երևակայող, թէ ինքը իրօք թերևս գերբնական արարած է, որի վեհ կնճիւնները հպարտ ճակատին ընկերներին հաճելի չեն կարող լինել, իբրև մի խոր հոգու խորքից եկող, շաղակըատում է.

Այս վեհ կնճիւններն հպարտ ճակատիս,

Գիտեմ, ընկերներ, ձեզ հաճելի չեն.

Խորքից եմ գալիս, խորն է իմ հոգին,

Սև ես ձեզ օտար, օտար եմ արդէն...

Հզոր մտքերը ծաղրում են միշտ ամեն տեսակի բուտիսա, փտած կարգեր, ամբողջային սրբութիւններ, այդպէս է և մեր բանաստեղծը.

Այս վեհ պսակը խոժոռ ճակատիս

Իմ հպարտ, հզոր միտքն է հիւսել,—

Իմ ազատ միտքը, որ զիտէ ծաղրել

Ձեր սրբութիւնը, բարի ընկերներ...

Բայց հր քայլում երևաց մեր բանաստեղծի «հզոր» միտքը, երբ նա ծաղրեց սրբութիւններ, հնացած պաշտամունքներ. և ոչ մի. նա և՛ անյաղթ է անուանում իրան, և՛ հպարտ, և՛ մենակ, որին ընկերները երբէք չեն հասկանում, որի ընկերները իր խոր մտքերն են, որ «վեհ թեւերով անհունն են չափում». sic!

Անպատճառ ժողովրդի մարդ լինել, տանել ամբողջ յետեւից՝ իբրև մարգարէ նոր ժամանակների, կարծէք մեր բանաստեղծի ցանկալի իդէալն է. բայց ցանկութիւններն անարժէք են, եթէ նրանք իրականանալու անկարողութիւնն ունեն.

Սև ծունկ չոքեցի ալեկոծ կեանքի

Սեղանի առաջ. անվեհեր հոգով

Ոտք դրի ուղին նոր մարզարէի  
Եւ ազատութեան, վեհուծեան երզով:  
Եւ ես զնում եմ նոր հեռու ափեր.  
Եւ այս կնճիռներն ճակատիս պսակ,  
Անխօս վկայ են, որ վիշտ, տանջանքներ  
Ես ճաշակել եմ, որպէս յաղթանակ...

\*  
\*\*

Ա. Իս. սիմվոլիստական ոտանաւորների մէջ նշանաւոր  
առեղ է բռնում «Տիեզերական զանգը»:

Եւ ես ապատում եւ անպատում  
Լուռ թափառում եմ հողիս ծանրացած.  
Եւ ես ըզզում եմ, ահա տեսնում եմ  
Ողջ տիեզերքը մի մեծ, անհուն զանդ,  
Եւ հողիս նրա լեզուակը վսեմ...

Այս մի սիմվոլիստական պատկեր է, որի մէջ այդ ուղ-  
ղութեան բնորոշ յատկանիշն է որոշած—ամեն ինչ ներքին  
աշխարհում:

Եւ հրաշքներով, վեհ լուծեան մէջ  
Տիեզերքն անչափ՝ խոր զօղանջում է  
Նրան անհունութեան, եւ յաւերժութեան,  
Եւ ճշմարտութեան, եւ զեղեցկութեան:  
Եւ տիեզերքը խո՛ր զօղանջում է,  
Եւ իմ հոգումն է, իմ Ոգին է այն,  
Որ զօղանջում է—ես մարզարէ եմ...

Նոյն պատկերի վարիացիան է աւելի որոշ և մանրամա-  
տքն արտայայտութեամբ և ոչ այլ բան:

Եւ ահա այնտեղ ամբոխն է ծփում  
Մանր ու թանձր՝ ովկիանի նման.  
Եւ զո՛րշ, հա՛րթ է նա—մի հսկայ զանդւած:  
Եւ հոգուս խորքից բարբառ եմ լսում—  
Ղօղանջը զանգի տիեզերական.  
Եւ դէպի ամբոխն իջնում եմ ահա  
Նոր կտակներով, նոր պատգամներով.  
Դէպ նրա հողին զահա՛լիւսում եմ  
Նրան խայծելու, եւ՛ քարոզելու,  
Եւ արտասելու, եւ այրելու...

Ամբողջ ոտանաւորը միայն սիմվոլիստական մի պատկեր  
է, ներկայացնում է բանաստեղծին, որը ըստ սիմվոլիզմի նոյն  
է, ինչ որ մարգարէն, որ գալիս է խայթելու, քարոզելու մարդկու-

թեանը, որ դժբախտութեան, մոլորութեան մէջ մի «գորշ, հարթ ամբոխ» է ներկայացնում, առաջնորդելու դէպի այն բիւրեղացած իդէալ կեանքը, որ ներկայ կեանքի յետևում է երևում, սիմվոլիստի ներքին աշխարհում, երբ նա լուսութեան, մենութեան, ցնորքների մէջ սուզուում է իրերի և երևոյթների ներքինը՝ այնտեղ յաւիտենական իդէալը որոնելու:

Երկրորդ մասում ներկայացնում է տոգորուած մարգարէին ամբոխի մէջ, որը նրան չհասկանալով՝ ծաղրում է, որին փոխադարձաբար բանաստեղծ-մարգարէն արհամարհում է:

Ամբողջ ոտանաւորը չի ներկայացնում իրանից ոչ մի ինքնուրոյն և նոր գործ, միայն ոտանաւոր ձևի մէջ հեղինակը պատկերացրել է բանաստեղծին, ապա և հէնց իրան՝ ըստ սիմվոլիզմի. այդ միայն օճառի գոյնգոյն մի բշտիկ է, որ զարմացնում և խաբում է երեխաներին: Մարդկութեան վշտերի և ցաւերի բեռան տակ խորհող ու մաշուող, նրան նորանոր ճանապարհների յուսով վառող տիտանի խօսքեր են դրանք, որ զալիս է դէպի ամբոխը՝ նրար «և՛ խայթելու, և՛ քարոզելու և՛ այրուելու, և՛ տանջուելու»։ Բայց երբ դրանք ելնում են մի մարդու բերանից, որ ոչ մի կերպ ցոյց չէ տալիս, թէ գիտէ այդ հոգսերով այրուել, ոչ մի նոր գաղափար ու խօսք, որ այդ խեղճ ամբոխին ուղղուած լինէր, այն ժամանակ այդ բառերը դառնում են անմիտ ֆրազներ: Նա թափառում է ամբոխի մէջ իբրև նոր խօսքի ակետաբեր, նրան՝ չհասկացող ամբոխը ծաղրում ու հալածում է, ամբոխին օտար իբրև խորթ որդի, բայց և միշտ նրան բարեկամ (ամբոխին օտար, բայց և միշտ նրան բարեկամ. Նիցշէ.) այդ մարդը «ամբոխի բախտով հեծում է, ցնծում»։ Բայց այդ ինչ մտքեր ու գաղափարներ են, որոնց պատճառով նա հալածւում է, ինչ նոր խօսք ասաց և իբրև խորթ որդի ծաղրուած թափառեց առանց հասկացուելու:

Երբէք նպատակս չէ ասելու, թէ անպատճառ պ. Ա. Իս. մի նոր մարգարէ պիտի լինի. բնաւ, այլ այն, որ եթէ կեանքն ու անհատական ուժը չեն տուել նրան այն, ինչ ինքը կը կամենար, և եթէ մի հասարակութեան կեանքում հորիզոններ ճանաչելու և թարմ հասարակական նոտաներ ձայնելու կարողութիւնից հեռու է, այդ դեռ չէ նշանակում, թէ ցնորքները կարող կը լինին նիւթ ու ներքին տալ նրա երգերին:

Թող ներուրի մեզ, եթէ երկար ենք կանգ առնում միևնոյն նիւթի վրայ, բայց անկասկած է, որ պիտի շեշտենք և այն, որ «Տիեզերական դանգը» (նա է—մարգարէ, բանաստեղծ. Ա. Իսահակ.) յիշեցնում է Պուշկինի և Լերմոնտովի «Пророкъ» նոյնանուն ոտանաւորները: Լերմոնտովի ոտանաւորը կարծէք շարու-

նահութիւն է Պուշկինի ոտանաւորին. նոյնպէս և եթէ մեր քանաստեղծի ոտանաւորի առաջին մասը նման է Պուշկինի քանաստեղծութեան, ապա երկրորդ մասը Լերմոնտովի քանաստեղծութիւնն է յիշեցնում: Պուշկինի՝ անապատում թափառող մարգարէին երևում է հրեշտակը նրան ներշնչելու, պատրաստելու Աստուծոյ ձայնի համար, Ա. Իսահակեան-մարգարէն ինքն է, որ անապատի լուսեան մէջ ներշնչուած թափառում է և լսում է «ղօղանջը զանգի տիեզերական», որը իր հոգումն է և իր հոգին է. և այդ ծանրացած հոգին իջնում է դէպի ամբոխը, ինչպէս և Պուշկինի մարգարէն, վերջինս որպէսզի կատարէ պատգամը՝ «Глаголомъ жги сердца людей», իսկ առաջինը, և՛ խայթելու, և՛ քարոզելու, և՛ արտասուելու, և՛ այրուելու):

Պուշկին

Իսահակեան

Духовной жаждою томимъ,  
Въ пустыняхъ мрачной я вла-  
чуся...

Սե ես ապտում եւ անապատում  
Լուս թափառում եմ հոգիս ծանրա-  
ցած...

Ապա մի քանի ֆրազներից յետոյ գալիս են հետեւեալ տողերը, որ Նիցշէի ազդեցութեան արձագանգներն են.

Սե անա այնտեղ ամբոխն է ծփում

Ծանրը ու թանձրը՝ ովկիանի նրման,

Իւ դ՞րոջ, հա՛րթ է նա—մի հսկայ զանգաւծ.

И Бога гласъ ко мнѣ воз-  
звалъ:

Սե հոգուս խորքից բարբառ եմ լը-  
սում—

Ղօղանջը զանգի տիեզերական.

Արտաքինով, Աստուծոյ պատգամը Պուշկինի մարգարէին, դէպի ամբոխը իջնող Իսահակեան-մարգարէի նպատակն է.

Возстанъ, пророкъ, и возглаголю,  
и еземъ,

Սե դէպի ամբոխն իջնում եմ անա  
Նոր կտակներով, նոր պատգամներով,

Исполнись волею Моею,

Ի՛էպ նրբա հոգին զահալիժւում եմ՝  
Նրան խայթելու, եւ քարոզելու,

И, обходя моря и земли,

Ս՛լ արտասուելու, եւ այրուելու...

Глаголомъ жги сердца людей!

Երկրորդ մասում Իսահակեան-մարգարէն արդէն ամբոխի մէջ է, ինչպէս Լերմոնտովի մարգարէն, որ մարդկանց մէջ է իջնում հէնց այն ժամանակ, երբ Աստուած վերջացնում է իր պատգամը Պուշկինի մարգարէին, նրան պատուիրելով խօսքով այրելու մարդկանց սիրտը. այն, ինչ ասում է Լերմոնտովը՝ ուրոջ իր պատճառներով, նոյնը ասում է Իսահակեանը՝ անորոջ, կարծէք իբրև թոյլ եզրակացութիւն նրան, որ Լերմոնտովն է շօշափել:

## Լերմոնտով

Съ тѣхъ поръ, какъ Вѣчный  
Судія

Мнѣ далъ всевѣдѣныя про-  
рока,

Въ очаяхъ людей читаю я

Страницы злобы и порока.

Провозглашать я стала люб-  
ви

И правды чистыя ученья:

Въ меня все ближніе мои

Бросали бышено каменя.

Լերմոնտովի մարգարէն հպարտ է, իսկ Իսահակեան-  
մարգարէն նիցշէական գոռոզութեամբ վարակուած.

Онъ юрды былъ, не ужился  
съ нами:

Բայց վե՞ խոհերով թեւաւոր հոգիւ-  
Ամբոխի ծաղրին ունկն չի դնում.

Ամբոխի բախտով հեծում եմ, ցըն-  
ծում,—

Օ, հսկայ անմիտ, ինձ չես ծանա-  
չում...

Ռուս բանաստեղծների ազդեցութեան մեր բանաստեղծը  
կարող է ենթարկուած լինել նոյնիսկ անգիտակցաբար, գրե-  
լու ժամանակ հոգեբանօրէն ենթարկուելով այն հին պատկե-  
րացումներին, որոնք ստացել է վերոգրեալ ոտանաւորների  
ընթերցումից, բայց այն, ինչ թւում է իրողութիւն, այն է,  
որ «Տիեզերական զանգը» ուսուցիչների ոտանաւորների  
թոյլ ու տարտամ վարիացիան է՝ նիցշէական գունաւորու-  
թեամբ սիմվոլիզմի պաճուճանքներով զարդարած:

Ինքնահաւան այդ զգացմունքները նրան հասցնում են  
խորհրդաւոր ոգու աստիճանին, որի անափ ու անչափ մտքե-  
րը հոգումը մրրկուում են.

Բայց ես սկի եմ...

Սօսիները կը սօսափին

Լուս ու անդորր գիշերին,

Մտքերն հոգումս կը մրրկեն—

Մտքերս անափ ու անչափ...

Իսկ այդպիսի ոգիներին աստղերն ու արշալոյսն իհարկէ՝  
շատ կը սիրեն.

Անհուն երկնում ջինջ աստղերը՝

Գիտեմ՝ ինձ շատ են սիրում,

Վարդ-ամպերում արշալոյսը  
Ամենից շատ ինձ է զրկում:

\*  
\*\*

Սիրերգութիւնը Ա. Իսահակեանի բանաստեղծութեան ամենաուժեղ լարն է կազմում, միակ լարը, որի ձայնը այնքան անկեղծ է և հարազատ նրա հոգուն, թերևս միակ ընտրոշ արտայայտութիւնը նրա ներքինի. ցնորական ու քնքոյշ, մեղդիկ ու տխուր երգերը, որոնք երբեմն մրմնջում են նրա պոէզիայում, առանձին հրապոյր են տալիս նրա զործերին, որոնց մեծագոյն մասը վայեր ու վոյեր, ցանկութիւններ ու տենչանքներ են. «մենակ սիրոյ լարը մնաց սրտիս անհուն խորքերում, ու սուրբ սիրոյ երգը շողաց կեանքիս ամեն ծալքերում...» շեշտում ենք սոյն տողերի վրայ, իբրև բանաստեղծի հոգեկանի ամենաճիշտ յայտարարի վրայ. և եթէ իրօք այդպէս է, էլ ի՞նչ խօսք նրա մարգարէ, խայթող ու առաջնորդող քարոզիչ լինելու կամ «հեռու ափին» որոնումների ու թափառումների մասին. կեանքի քաղցրութիւնը ճշուն ու նուշ պաշերի» մէջ որոնող և միաժամանակ մարդկութեան ցաւերով այրուող, նրան լոյս տուող . . . դրանք տրամագծօրէն հակասական իրողութիւններ են:

Եւ միայն ամեն բան սիրոյ համար զո՞հ բերողը կարող է ասել.

Վուզես՝ լինիմ վշտի ցօղեր—  
Աչերիդ մէջ շող կայծեմ,  
Լուս զիշերւայ անուշ հովեր—  
Փունջ-ծամերդ փայփայեմ:  
Ի՞նչ որ ցանկաս՝ կուզես լինիմ,  
Լինիմ երկինք ու երկիր.  
Լինիմ ծով, ժայռ, արեւ, լուսին,  
Միայն, միայն ինձ սիրիր...

Որքան և անձնական լինի մեր բանաստեղծի սիրերգութիւնը, այնուամենայնիւ, ինչպէս շեշտել եմ արդէն, կան բանաստեղծութիւններ, որոնց ցնորուն և ցաւոտ ելևէջը տրամադրում է ընթերցողին.

Նրազ տեսայ—ձեր տան առաջ  
Ձուլալ աղբուր կը բղխէր,  
Ձէնը մեղմիկ քաղցրակարկաչ,  
Չորս զին ծուփ-ծուփ ծաղկունք էր:  
Ես էլ ծարաւ պապակ էի,

Ասի՛ մի կուշտ ջուր խմեմ,  
 Վրայ արծայ, մէկ էլ տեսայ  
 Յամքաւ աղուերն, քար դառաւ,  
 Քնից զարթնայ,—սիրտս էր տրտում,  
 Ա՛խ, էս շա՛տ վատ երազ է.  
 Ծարաւն՝ ես եմ, աղուերը՝ դուն  
 Սէրդ ինձ համար ցամքիր է:

Սիրակորոյս մարդու վիրաւոր սրտի թախծալի նոտան հնչում է հոգեբանական նրբութեամբ, ճշտութեամբ որոշելով մեղամաղձիկ հոգու վշտի որակը, իսկ երբեմն նրա մինոր նոտաների խուլ մորմոքը էստետիկական հաճուլալի տրամադրութիւն է զարթեցնում.

Ո՛ւր էք կորեր, զարնան օրեր,  
 Էն զով սարի հովն ո՛ւր է.  
 Կանչեմ, արիք, նշխուն հաւքեր,  
 Ալ-շրթունքով վարդն ո՛ւր է:  
 Էս քարափէն աղուր կուգար.  
 Կարան էստեղ երգ կատէր.  
 Խոր ծմակէն մարալն կուգար,  
 —Սիրտս ուրախ կըզարնէր.  
 Հիմի ցուրտ է, ծունն է եկեր,  
 Չորս դիս ծմեռ ու սառուց.  
 Ա՛խ, էլ ջրկան արեւ-օրեր,  
 Սիրտս էլ սառեր է վաղուց...

Ոտանաւորի մէջ նկատելի չէ հեծեծանք կամ մղկտոց, այլ հանդարտ, բայց դառն վիշտ, որի թախծալի նուագը համակում է ընթերցողին անդորր մեղամաղձութեամբ: Բանաստեղծի այդօրինակ կտորները նոյնիսկ «հեծեծանքների երգերն» են յիշեցնում. նոյն յատկութիւններով աչքի են ընկնում նաև այլ տեղեր, առանձնապէս «Ճնորքներ ու մորմոքներ» ութեակներում:

Ա. Իսահակեանի վշտի երգերը ընդհանուր կողորխտով կրում են սիրոյ երգերի նմանութիւնը, և մեր առաջ ներկայանում է մի մարդ, որ տանջւում է, մորմոքւում, յուսահատւում, բայց ինչու, ինչ պատճառներից, առանց ենթադրութիւնների այդ մենք չգիտենք, միայն լսում ենք մրմունջներ, ցաւոտ հնչիւններ, որոնք այնուամենայնիւ ազդում են, շնորհիւ քնքոյշ և անկեղծ մելոդիայի և հեղինակի քնարերգական խառնուածքի:  
 Ես որ մեռնիմ, ինձի թաղէք  
 Ալագեաղի լանջերում,  
 Որ Մանթաշի հովերը դան,

Վերստ հեւա՛ն ու երթա՛ն:  
Գերեզմանիս չորս դին փուփն  
Վայրի դաշտեր ծփծփա՛ն,  
Նւ ուռիներն մազերն արծակ՛  
Վերստ ընկնեն, անու՛շ լան... Լայլն

Դառնացած ու թախծալի հոգու յուսահատական ուժեղ շրունջ է յետագայ ոտանաւորը, որ Լերմոնտովեան լարի ձայն է յիշեցնում.

Էս իմ բարդիքն անուշ կը խշշան,  
Լւ ձէնը կերթայ հիւո՛ւ, շա՛տ հեռո՛ւ,  
Ա՛խ, շա՛տ կըլսես էս ձէնը, մէր ջան,  
Բայց բալիդ ձէնը էլ չես լսելու...  
Կընկնեմ չօլի մէջ հեռո՛ւ, անգիւման,  
Աւազների մէջ, բարկ արեւի տակ.  
Ա՛խ, ծիս կըփորէ ինձի գերեզման,  
Ու քուն կըմտնեմ դարդիս հետ մենակ...

Վիշաք նրան հասցնում է յուսահատութեան և նոյնխոյ գոռետես արամազրութեան դէպի աշխարհը. աշխարհը ցաւի աշխարհ է, իսկ մարդուս բախտը գերեզմանի պէս սև է. դրժբախտ կացութեան մէջ գանգատուելու տեղ չկայ, ամբողջ աշխարհը անգութ է. նա մի գնդան է.

Դու զնդան ես, անգութ աշխարհ,  
Ու ելք չունիմ, յոյս չունիմ:

Իսկ մահը, այդ գորդեան հանգոյցը և մարդկային տանջանքի ու մաշող մտորման մշտնջենական առարկան, որ ըզբազդեցնում է և՛ մահկանացուին, և՛ մտածողին, մեր բանաստեղծին յուսահատ ու դառն մրմնջեցնում է, որի մէջ նկատուում է կարծէք արհամարհանքի ու զզուանքի մի տարտամ հնչիւն.

Ինչքան կանչեմ ու աղաչեմ,  
Վերջ էլ պիտի, սե՛ւ աշխարհ,  
Մի բուռ հողով բերանս ծեպես,  
Լեզուս կապես, փո՛ւչ աշխարհ:

Գերեզմանի սէրը երբեմն ընդգրկում է նրան, որ յուսահատութեան մակախմալ՝ չափն է.

Սիրտս դարդոտ ու անդամա՛ւ՛  
Կարօտցիր եմ սեւ հողին.  
Գրկեմ հողը, սիրտս քուն տամ  
Իմ մօր ծոցը—սեւ հողին:

Իսկ ցաւը և մահուան հեռանկարը զբազդեցնում են նրան մութ անտառով լուռ ման գալիս, երբ նրա հետ բուն և ագռաւն են խօսում, տերևներն են շշնջում, յիշեցնելով Դուրեանի

այն դրութիւնը, երբ անցորդին պատահելով՝ «կը մեռնի» բառն է լսում. մեր բանաստեղծի հոգեկան այդ կացութեան արտայայտութիւն՝ «Մութ անտառով լուռ ման կու գամ» ոտանաւորի և Դուրեանի «Ի՞նչ կըսեն»-ի հիմնական գծերի մէջ նմանութիւն է երևում.

## Դուրեան

Ինձի կըսեն—«Միշտ տխուր ես».  
Ի՞նչպէս չըլլամ,—վէկիկ-մէկիկ  
Քօթափեցան գլխուս աստեղք,  
Արշալոյս մը չանցա՛ւ սրբոէս:  
Ես ինձ կըսեմ.— «Ժամդ է հասեր,  
Քու երկրորդ սեւ մօրդ գնն գող,  
Գերեզմա՛ն, հոն գտնես դու գող,  
Վարդեր, թրթռում, թռիչ ու աստ-  
ղեր»...

## Իսահակեան

Մութ անտառով լուռ ման կուգամ,  
Բուն ու ազուա ինձի կըսեն.  
«Ա՛խ, խեղճ տղայ, ի՞նչ տխուր ես,  
Դու հիւանդ ես»... ինձի կըսեն:  
Մութ անտառով լուռ ման կուգամ,  
Ցօղը կըշաղէ ծառերէն.  
«Ա՛յ խեղճ տղայ, վէրքդ խորն է,  
Վերադ կուլանք...» ինձի կըսեն:  
Քամին փչեց, ու ծառերէն  
Տերեւները վար ընկան.  
—Է՛յ, խեղճ տղայ, տերեւներն են  
Քու մահիճն ու գերեզման»...

Եթէ Դուրեան դառն մորմոքով և ուժեղ շեշտով իր հոգեկան ցաւն է պատկերացնում, Իսահակեան թոյլ նուազով և միանգամայն տարբեր եղանակով նոյն դրութիւնն է կամենում արտայայտել, առանց վշտի պատճառները յայտնելու՝ ինչպէս Դուրեան. վերջին քառեակում եթէ Դուրեան դէպի գերեզման փափագող զգացմունքի մի շեշտ է զարկում, նոյն գերեզմանի հեռանկարը կարծէք ունայն կեանքի վշտով ցաւեցնում է մեր բանաստեղծին: Նոյն կեանքի տանջանքը ու թախիծը նրան քաղցր են դարձնում հին նահապետական, պարզ ու իդիլիական կեանքը.

Արազի ափին ըստանս լինի.

Սալվի-ուռ տնկեմ, վարդեր ու լալս.

Հով ուռնու տակ քողիքս լինի,—

Օջաղիս մէջը կրակ բոց կըտայ... Լայլն

Ուշադրութեան արժանի են նաև հետեւեալ գեղեցիկ էլեգիաները. «էս ի՞նչն է ամպում զիլ թւին կուտայ», «Պարզկայ գիշեր»... «Երարդը սրտիս ճամբայ ընկայ», «Ընկերներս վաղ են մեռեր», «Ճամբու կիսուն թափս եմ կտրեր», «Տխուր, գլխակոր, սիրտս դարդի ծով»:

Ա. Իս. մօրը նուիրել է մի քանի ոտանաւորներ. օր.՝ «Մայրիկիս», «Երարդը՝ սրտիս, աղքատ ու խեղճ» և այլ գեղեցիկ կտորներ, որոնց մէջ նա դրել է շատ անկեղծ, շատ ջերմ սէր դէպի ամենաթանկագին, ամենաանկեղծ արարածը ամեն մի

մարդու. մեր երգչի այդ զգացմունքը յիշեցնում է Նադսոնը: Ընկերական սէրը նոյնպէս նրա քնարից ջերմ թրթիռներ է խլել և այդ յատկանիշ է առհասարակ շատ լիբիկներէ, թէև մեր բանաստեղծը երբեմն խորթ ու օտար է համարում ամեն բան, ինչպէս և ընկերը:

Ժողովրդական մտաւեաները, որոնք յայտնի տեղ են գըրաւում մեր երիտասարդ երգչի պոէզիայում, գլխաւորապէս սիրային երգեր են, միանգամայն հարազատ նմանութեամբ նրա այդ տիպի այլ բանաստեղծութիւններին և թերևս հէնց այն պատճառով, որ մեր ժողովրդական պոէզիան իր խոր ազդեցութիւնն է թողել Ա. Իս. երգելու եղանակի, ձևի, լեզուի վրայ և հանդիսացել ամենազօրեղ միջոցը նրա բանաստեղծութեան ինքնատիպ և ուրոյն դրոշմին. կենսունակ ու կուսական մի շտեմարան, ինչպիսին ժողովրդական բանաստեղծութիւնն է, անկասկած է իր թարմ ազդեցութեամբ առհասարակ գրականութեան վրայ, բայց որոնել և ընտրել նիւթեր ու մոտիւններ և ստեղծագործել նորից գեղարուեստական կարողութեամբ, որի մէջ ցոլանում է բանաստեղծի անհատական ձիրքը, կորովը, ահա այդ քայլում է երևում երգչի կամ գեղարուեստագէտ ստեղծագործողի հապճը:

Ա. Իս. օգտուելով ըստ մեծի մասին սիրային երգերից, որ իր սիրած լարն է, ընտրել է յաջող, բայց աւելի շատ անյաջող կտորներ, որոնց ընդհանուր պատկերը նրա անձնական, մակերևոյթական սիրուն ուղիղ յարաբերական է. բայց նա գիտէ ստեղծագործել, հմայիչ գեղեցկութիւն տալ ժողովրդական մոտիւններին և մեր մէջ, թերևս այդ ասպարիզում, քնարերգական ճիւղի մէջ, ներկայութեամբ տակաւին մրցող չունենայ. կրկնութիւնները ինչպէս միշտ, այս անգամ էլ նշանաւոր տեղ են գրաւում, դարձեալ միևոյն հին մեղեդիներն են լսւում.

Շուշիկ-աղջիկ, չեմ դիմանայ,  
Սիրտս կառնի ու կուտայ:  
Նուռ-պաչ կուզեմ, նուշ-պաչ կուզեմ,  
Աշխարհք մէնիս մէն կուտայ...

կամ՝

Էդ պաչը, որ դու ինձ տւիր,  
Էնպէս անուշ-մեղուշ էր,  
Էդպէս ստուղ ծառ ու ծաղիկ,  
Մով ու ցամաք չէ ծիր:

Նկատուում է յափշտակութիւն կնոջ արտաքինով, մի արևելցի իր ցանկութիւններով ու հոգով. արևելեան ժանրի այդ սիրերգները ոչ մի կրթիչ նշանակութիւն չեն ունենալ և

ոչ էլ գեղարուեստական տեսակէտից արժէքաւոր կը լինեն. բայց միաժամանակ այդ և նման բանաստեղծութիւնների մէջ, որքան և կնոջ արտաքինի մոլի երկրպագութիւն է նկատուում, այնուամենայնիւ կոպիտ կիրք երբէք չկայ, այլ մի ինչ-որ քնքշութիւն, պարզութիւն, անկեղծութիւն, որ հայկական ժողովրդական սիրերգութեան բնորոշ յատկանիշն ու արժէքն է ըստիս: Նման ոտանաւորների հետ միաժամանակ մեր բանաստեղծը արտադրել է ժողովրդական գեղեցիկ գործեր, վարպետական, շնորհալի մշակութեամբ, իրանց իդիլիական պարզութեամբ և գրաւչութեամբ.

Արեւն իջաւ սարի գլխուն,  
Դար ու դաշտում լուս չկայ.  
Հաւք ու թռչունք մտան խոր քուն,  
Ա՛խ, ինձ համար քուն չըկայ.  
Լուսնակն ընկաւ երթըկից ներս,  
Կշեռքն ելաւ երկնքում.  
Ձով հովերն էլ մ'Յընշողին  
Աստղերի հետ են զբոցում:  
—Միրուն աստղե՛ր, անուշ հովե՛ր,  
Եարս ո՞ւր ա էս գիշեր.  
Պարզ երկնքի նշխուն աչն՞,  
Եարիս տեսա՞ք էս գիշեր:

—  
Լուսը բացաւ, դուրը բացաւ:  
Ամպ ու զամպ է,—ծօն կուպայ.  
Այ ծին եկաւ, անտէր եկաւ,  
Ա՛խ, եարս ո՞ւր ա, տուն չի գայ...

Բանաստեղծութեան հագեբանական նրբութիւնը ճշգրիտ պատկերացնում է սպասող էակի կանացի սիրտը իր դառն ու սպասողական դրութեամբ, որ վերջը կարծէք հեկեկանքի է փոխւում. ոտանաւորի մեղմ, քնքոյշ ու ցաւոտ քնարերգութիւնը իր պատկերաւոր գեղեցիկ արտայայտութեամբ օրինակելի ներդաշնակութիւն է կազմում և բանաստեղծութիւնը կատարեալ դարձնում հոգեբանեկան և գեղարուեստական տեսակէտից:

Կոլցովեան կոլորիտով, բայց միանգամայն հայկական հոգով հնչուող ոտանաւորի մէջ ամբողջ մի ժողովրդի գեղջկական կեանքի ու մաքուր աշխատանքի հրապոյրն է նկատւում.

Մածկալ ես, ընդարած ես,  
Առը շուռ տուր, շնտ արի.

Մովի պէս քրտընած ես,  
 Եզներն արծկի, տոն արի.  
 Դադրած, բեղարած ենր ջան  
 Ամպերն ելան, դէ՛հ արի.  
 Բեղարած ջանի՛դ դուրբան,  
 Մտից թեւ առ, թեղ արի...

Հայ գեղջկուհու բարոյական ներքինը, ամուսնական սիրոյ գորովն իր իգիլլիական գեղեցկութեամբ և աւելի քնքոյշ ու նուրբ է ցոլացել հետեւեալ տողերի մէջ.

Աստղի ցոլքով գիշերն իջաւ,  
 Թո՛ղ տոնը, ենր ջան, արօրը,  
 Դար ու դարափ խոր քուն մտան,  
 Հօտը իջաւ մուծ ձորը:  
 Հովը բարակ կըշնկշնկայ,  
 Էրած սիրտդ զովին տուր,  
 Արի գիրկս, քունդ կուզայ,  
 Սրտիդ, դարդիդ դադար տոնր:

Վերջին ոտանաւորներն իրանց տրամադրութեամբ և ոգով յիշեցնում են Պատկանեանի «շինականի առաւօտեան և երեկոյեան երգերը». ամբողջ մի աշխարհ է բովանդակուած այդ տողերի մէջ, հայ գիւղն իւր նահապետական պատկերով, հայ գիւղացին՝ չարքաշ աշխատանքով, կեանք, որից ելած իւրաքանչիւր հնչիւն անորոշ ու խոր ցաւի յաւէտ ձայնող մի նոտա ունի. երիտասարդ բանաստեղծի ընդունակ գրիչը գովելի վարպետութեամբ և հոգատարութեամբ իր ստեղծագործական կնիքն է դրել այդօրինակ երգերի վրայ: Հայկական կեանքը և մասնաւորապէս գիւղականը սոցիալական կարգերի վատթար պայմաններից առաջացած շատ խոր վէրքեր ունի, միշտ կսկծող, միշտ անհանգիստ և անդորրութիւն խանգարող.

Ձմռն անցաւ, եկաւ զարուն,  
 Հալաւ բանձրիկ սարերու ձուն,  
 Ճամբայ բացաւ դարիքներուն:  
 Իմ դարիքէն խաբար չըկայ,  
 Աչքս ծամբին՝ դադար չըկայ.

Այդ հոգսերից մէկի վիշտն է ձայնում վերոգրուած պարզ, անպաճոյճ տողերի մէջ, ձայն, որ մտայլ հորիզոններ է բանում իւրաքանչիւրի առաջ. նման պայմանների տակ հեծող թունաւորուած, ցաւազար սիրտը կարող է կսկծալ այն տանջանքով, որ բոլով տառապելիների, հարստահարուող, մաշուող բազմութեան մըմուռ, խոր վէրքերի տանջանքն է.

Ա՛խ, մեր սիրտը լիքը դարդ, ցաւ,

Օր ու արեւ չըտեսանք.

Վա՛խ, մեր կիանքը սեւով անցաւ,

Աշխարհից բան չիմացանք:

Հարուստ մարդիկ կուտին խմին

Աշխարհի ճոխ սեղանից,

Մենք աշխարհքի խորթ տղերքն ենք,

Մեզ փայ չըկայ աշխարհից:

Թէպէտ տարտամ, մութ, բայց սոցիալիզմի նոտա է՝  
զգայուն շեշտով հնչուող հիասթափութեան ու յոգնութեան կը-  
ծու դառնութեամբ վերջացող.

Խեղճ աղքատի հողին դուրս գայ,

Քարից-հողից հաց քամէ.

Բռով հացը հարստին տայ,

Հարուստն իշխէ, վայելէ:

Խեղճ աղքատը դառը դատի,—

Դատարկ նստի... էյ, աշխարհ,

էլ ինչո՞ւ ես քարը թողնում

Քարի վրայ, քար-աշխարհ:

Դարդի ու ցաւի մէջ «քար աշխարհի» գաղտնիքը յոգնա-  
տանջ մարդուն շուարածութիւն է պատճառում.

Ա՛խ, մեր սիրտը լիքը դարդ, ցաւ,

Օր ու արեւ չըտեսանք.

Վա՛խ, մեր կիանքը սեւով անցաւ,

Աշխարհից բան չիմացանք:

Ամբողջ մի ժողովրդի հոգեբանութիւն է երևում այս  
բանաստեղծութեան մէջ, միաժամանակ և՛ մարդկութեան հա-  
րըստահարուող մասի դառն կացութիւնը. այս միայն երգ է,  
տանջուողի կսկիծ, վշտի ու սոցիալական խոր վէրքի մրմունջ  
ու տրտունջ:

Սակաւաթիւ ազգային մոտիւնները գրաւում են իրանց  
անկեղծ ու քնքոյշ զգացմունքով, թախծի զգայուն շեշտով,  
վերարտադրելով տանջուող երկրի մշտամաշ վիշտը, օր՝ «Մալ-  
նոյ ձորերում», «է՛յ ջան հայրենիք»: Զգացմունքով միանման,  
բայց աւելի թոյլ երակով աչքի է ընկնում Բայրընի երբայա-  
կան մեղեդիների ազդեցութեամբ գրած «Ժսրայէլացիք Բաբե-  
լոնում» ոտանաւորը, որ առանձնապէս նման է անգլիացի բա-  
նաստեղծի «Բաբելոնեան ջրերի մօտ» բանաստեղծութեան.  
համեմատում ենք Գումբերտի, Բոգաւայի և Ստալինի ոտնա-  
կան պրոզայիկ թարգմանութեան հետ, որ յայտնի է իբրև ա-  
մենամօտր բնագրին.

Բայրըն

Բասահեան

Мы сидѣли и плакали у воды  
вавилонскихъ и вспоминали  
день, когда врагъ въ пылу спѣ-  
чи сдѣлалъ своею добычею  
наши высоты и вась, пе-  
чальнымъ дочери Салима.

Пока съ тоской смотрѣли  
мы на свободно-текущую у  
ногъ нашихъ рѣку, они про-  
сили, чтобы мы стѣли имъ  
свою тѣсню; но никогда не  
увидитъ чужеземецъ этого  
торжества! Пусть вѣпки  
отсохнетъ рука моя, если  
коснется струнъ нашей сла-  
вной арфы въ утѣху врагу.

Եւ Բաբելոնի յորձուտ գետերի  
ձոխ ավերի մօտ վշտահար նստած՝  
Լուս լալիս էինք, երբ մեր պանծալի  
Սիոնն յիշու՞մ...

— Ե՛նչու էք լալիս... մեր գերիչ-  
ները

Անում էին մեզ— Ե՛նչու՞ էք հըն-  
չում

Չքնաղ Սիոնի անուշ երգերը...  
Եւ ի՞նչ— մենք մի՞թէ օտար աստ-  
ղերի

Ֆուլանքի տակ կարող ենք երգել  
Վե՞ն սաղմոսները Տէր-Սաբառովի...

— Օհ, Երուսաղէ՛մ... եթէ ուրանամ,  
Ես քեզ մոռանամ, թող իմ բազուկս  
Եւ ինձ մոռանայ, լեզուս յախտեան  
Թող կպչի քիմքիս...

— Օհ, Երուսաղէ՛մ... եթէ ուրանամ,  
Ես քեզ մոռանամ, թող իմ բազուկս  
Եւ ինձ մոռանայ, լեզուս յախտեան  
Թող կպչի քիմքիս...

Ազդեցութիւնը նկատելի է միայն առաջին երեք ստրոֆնե-  
րի վրայ, իսկ վերջին երկուսը, որոնք ազատ են դրանից, բա-  
նաստեղծութեան ամենաթոյլ մասերն են:

\*\*

Արուեստի և մասնաւորապէս չափի մէջ առանձին աչքի  
բնկնող կողմ չկայ, չափը երբեմն միեւնոյն ոտանաւորի մէջ փոխ-  
ւում է. օր.՝ «էս գիշեր, ամպհով գիշեր». յանգերը ճոխութիւն  
չունին, բայց նրա պոէզիայի երաժշտականութիւնը հնչում է  
այնքան հեշտալուր և ախորժելի, ինչպէս վաղորդեան սիւզի  
չըշիւնը սաղարթախիտ պուրակի մէջ.

Աստղի ցոլքով գիշերն իջաւ,  
Թո՛ղ տուր, եսր ջան, արօրը,  
Դար ու դարափ խոր բուն մտաւ,  
Հօտը իջաւ մու՛կ ձորը:

Արտայայտիչ նուրբ վիշտ է նկատուում նրա մեղոգիկ ելեւե-  
ջի մէջ.

— Ա՛խ, էն հաւքը, ի՞նչպէս քաղցր  
Ձէնը քցեց, ախպէր ջան,

Էնոր մէնը քոնի ծորն է,  
Կունն երգ ասն, Աւօ ջան...

Աւ. Իս. պոէզիան նրա ոճի ճկունութեան, քնքշութեան  
և մեղմ թախծալի երաժշտութեան մէջ է. և թերևս այդ է պատ-  
ճառը, որ ամբողջ մի ոտանաւոր իրանից ոչինչ չէ ներկայացը-  
նում, այն ինչ զանազան տներ գրաւում են իրանց ոճի գե-  
ղեցկութեամբ և մինիատիւր պատկերներով.

Երկինքն անամպ, անձռ լուսին,  
Աստղերի մէջ ման կուգայ.  
Հարօսները սօ՛ւրին-սօ՛ւրին,  
Հովի հովտում կրհնայ:

Ճաշակը՝ թարմ ու գեղեցիկ մակդիրների դասաւորու-  
թեան մէջ և երևոյթների պարզ ու բնական արտայայտութիւ-  
նը գեղարուեստական փայլ են տալիս նրա յաջող կտորներին.

Մուծը զրկած գետ ու գետին,  
Հով ու ափը կրծփան.  
Երկինք զրկած աստղ ու լուսին,  
Մեղմ կըննջէ Արփա-չայն:

Կամ գիշերային հետևեալ տեսարանը, որ նկարչական գե-  
ղեցիկ ամբողջութիւն է կազմում.

—Պարզկայ գիշեր...  
Աստղերն երկնքում լուռ պսպղում են.  
Լուսնի շողերը դիպել են սարի  
Զիւնոտ կողերին—կողերը ցորում,  
Պէծին են տալի:

Պէտք է շեշտել, որ Աւ. Իս. բնութեան պատկերներ շատ  
քիչ ունի, նա չէ նկարում, այլ նկարելիս էլ երգում է, և եթէ  
փոքրիկ պատկերներ ցուում են նրա բանաստեղծութեան մէջ,  
այդ էլ լիբիզմը աւելի զգայուն և արտայայտիչ դարձնելու  
համար է, օգտուելով զուգահեռականութեան օրէնքից—բնու-  
թեան և ներքին աշխարհի համեմատական նկարագրից, որ մեր  
ժողովրդական պոէզիայի ուշագրաւ յատկանիշներից մէկն է,  
որ և ազդել է երիտասարդ բանաստեղծի ոճի վրայ:

Եւ այդ լեզուն դարձել է դուրեկան հնչիւնների մի հիւ-  
սուածք առանց ներքին ուժի, անձնական մորմոքումներ ու  
ցնորքներ արտայայտելու ճկուն մի գործիք. բայց այն բոլորին,  
երբ մեր երգչի քնարն իր բնական, անարուեստ գեղեցկութեամբ  
ձայնում, է ձեր առաջն է կանգնում Շիրակի դաշտերի  
քնարահարն իր իդիլիական պարզութեամբ: